

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարությանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-413-09.12.2013-ՊԻ-010/0) վերաբերյալ:

1. Առաջարկում ենք 2-րդ հոդվածով լրացվող 72¹-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) օգտվել ինքնաշեն էլեկտրասարքերից, սարքավորումներից.»:

2. Անհրաժեշտ է հանել 3-րդ հոդվածը, քանի որ այդ հարցն արդեն իսկ կարգավորված է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասով:

3. 4-րդ հոդվածի կապակցությամբ հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ՝

1) ուղղիչ հիմնարկը չի կարող ապահովել իր տարածքի սահմաններում գտնվող բնակելի տարածքում դատապարտյալ անձանց բնակվելն իրենց ընտանիքների հետ.

2) դատապարտյալները պարտավոր են ներկայանալ վարչակազմի հաշվառման ամեն օր, այլապես անհասկանալի է հիմնարկում նրանց պահելու իմաստը:

4. Անհրաժեշտ է հանել 5-րդ հոդվածը, քանի որ այդ հարցերն արդեն իսկ կարգավորված են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի 9-րդ գլխով:

5. 7-րդ հոդվածի կապակցությամբ հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ դրա դրույթների կիրառումը կապված է մեծ ֆինանսական ծախսերի հետ:

6. Անհրաժեշտ է հանել 9-րդ հոդվածը, քանի որ այդ հարցերն արդեն իսկ կարգավորված են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի N 44-Ն հրամանով:

7. Առաջարկում ենք 10-րդ հոդվածով լրացվող ցանկի 10-րդ և 11-րդ կետերը լրացնել «բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների» բառերով:

Ինչ վերաբերում է նախագծի հիմնավորման մեջ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ կետի հղմանը, ապա հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ, համաձայն Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի, ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը սահմանվում է սույն օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Այսինքն, այդ հարցն օրենսգրքով կարգավորված է և համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, սակայն դա չի բացառում, ելնելով զուտ նպատակահարմարությունից և դատապարտյալների իրավունքներն առավել

ամբողջական պաշտպանելու անհրաժեշտությունից, օրենքի նախագծով առաջարկվող փոփոխությունները կատարելը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների և դիտողությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ: Գնահատման

նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագիծը վերաբերում է *քրեակատարողական օրենսդրության որոշ դրույթների հստակեցմանը, ինչպես նաև պարզաճ վարքագիծ դրսևորող դատապարտյալների համար որոշակի արտոնություններ սահմանելուն* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն **չի նախատեսվում**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը պայմանավորված է քրեակատարողական օրենսդրության մեջ հստակեցումներ մտցնելու, ինչպես նաև պատշաճ վարքագիծ դրսևորող դատապարտյալների համար որոշակի արտոնություններ սահմանելու անհրաժեշտությամբ:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենքի) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱՎՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 9-րդ հոդվածով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրքը լրացնել 92'-րդ հոդվածով, որի 3-րդ կետով առաջարկվում է դատապարտյալների ու նրանց՝ ազատության մեջ և պետական հատուկ հաստատություններում պահվող երեխաների միջև տեսակցություններն իրականացնել ուղղիչ հիմնարկի և այն պետական հաստատության հետ համատեղ, որտեղ պահվում է երեխան, և, դատապարտյալի անձնական հաշվի վրա պահանջվող գումարի բացակայության դեպքում, տեսակցության համար ճանապարհաձախսը տրամադրել պետության հաշվին:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք, որ վերը նշված օրենքի նախագծի ընդունումը կառաջացնի ՀՀ պետական բյուջեի ծախսերի ավելացման, որը հնարավոր չէ գնահատել՝ վերը նշված տեսակցությունների և դրանց համար նախատեսվող ճանապարհաձախսերի վերաբերյալ քանակական տվյալների բացակայությամբ պայմանավորված:

Պ-413-09.12.2013-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 24-ի քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 71-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ եւ 7-րդ մասերով՝

«6. Ուղղիչ հիմնարկում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում կարող են սահմանափակվել դատապարտյալների հետևյալ իրավունքները՝

ա) կրոնական ծեսերին մասնակցելու,

բ) քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելու,

գ) կրթություն ստանալու,

դ) աշխատանքով զբաղվելու,

ե) կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի խանութից կամ կրպակից կամ վարչակազմի միջոցով լրացուցիչ սնունդ եւ առաջին անհրաժեշտության եւ այլ առարկաներ ձեռք բերելու,

զ) լրացուցիչ վճարովի ծառայություններից օգտվելու,

է) դրամական փոխանցումներ, ծանրոցներ, հանձնուքներ եւ փաթեթներ ուղարկելու եւ ստանալու,

ը) նամակագրության,

թ) զբոսանքի,

ժ) տեսակցություններ ունենալու,

ժա) հեռախոսակապից օգտվելու,

ժբ) կարճաժամկետ մեկնումների,

ժգ) առանց պահախմբի կամ ուղեկցորդման ուղղիչ հիմնարկի սահմաններից դուրս տեղաշարժվելու:

7. Ուղղիչ հիմնարկում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում դադարեցվում է դատապարտյալների տեղաշարժը, նրանք մնում են այնտեղ, որտեղ գտնվել են արտակարգ իրավիճակ հայտարարվելու պահին՝ մինչեւ վարչակազմի ներկայացուցչի նոր հրահանգը»:

Հոդված 2. Օրենսգրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 72՝ -րդ հոդվածով՝

«Հոդված 72՝ . Ուղղիչ հիմնարկում արգելվող գործողությունները

1. Դատապարտյալին արգելվում է՝

1) իր մոտ ունենալ կամ խցում պահել սույն օրենսգրքի հավելվածով արգելված առարկաներ եւ սննդամթերք.

- 2) խցի, կացարանի կամ զբոսանքի վայրի սահմաններից դուրս նետել որեւէ իր կամ վերցնել այդ տարածքում հայտնաբերված իրը.
- 3) կիպ մոտենալ խցի կամ կացարանի դռան դիտանցքին եւ փակել այն, կատարել խցում կամ կացարանում գտնվող անձանց վարքագծի նկատմամբ հսկողություն իրականացնելուն խոչընդոտող այլ գործողություններ.
- 4) փչացնել ուղղիչ հիմնարկի՝ օգտագործման համար տրված իրերը, պատերի վրա նշումներ կամ գրառումներ անել, նկարել, թղթեր փակցնել, վնասել իրավական ակտերից կատարված եւ փակցված քաղվածքները, տեղեկատվության նպատակով փակցված ցուցանակները.
- 5) պատրաստել եւ օգտվել էլեկտրական եւ այլ սարքավորումներից.
- 6) առանց կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի թույլտվության՝ ուղղիչ հիմնարկի տարածքում պահել կենդանիներ, զբաղվել բանջարաբուծությամբ եւ սենյակային բուսաբուծությամբ, ստեղծել կենդանի բնության անկյուններ (անչափահաս դատապարտյալների համար ուղղիչ հիմնարկի տարածքում կարող են կազմակերպվել կենդանի բնության անկյուններ).
- 7) օգտագործել ակոհոլային խմիչքներ եւ թմրանյութեր, զբաղվել մոլախաղերով, ինչպես նաեւ նյութական կամ այլ շահ ստանալու նպատակով թույլատրելի խաղերով.
- 8) առանց կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի թույլտվության՝ փոխել անհատական քնելու տեղը, վարագուրել այն.
- 9) առանց կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի թույլտվության՝ կատարել սանհանգույցի կամ խցի կամ կացարանի լուսավորության աղբյուրի վերանորոգման աշխատանքներ.
- 10) հրաժարվել կամ խուսափել կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկում պահպանություն եւ հսկողություն իրականացնող վարչակազմի ներկայացուցչի օրինական կարգադրությունների կատարումից.
- 11) կազմակերպել եւ անցկացնել հրապարակային միջոցառումներ.
- 12) խախտել տեղաշարժման համար նախատեսված վայրերի սահմանները.
- 13) առանց կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի թույլտվության՝ դուրս գալ արտադրական եւ բնակելի գոտիների մեկուսացված տեղամասերի սահմաններից.
- 14) առանց կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի թույլտվության՝ գտնվել այլ կացարաններում, խցերում եւ արտադրական գոտիներում.
- 15) սնունդ պատրաստել եւ օգտագործել դրա համար չնախատեսված վայրերում.
- 16) առանց կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի թույլտվության՝ բարձրանալ շենքերի, արտադրամասերի, շինությունների եւ այլ կառույցների տանիքները, մոտենալ ներքին արգելագոտու պարսպին.
- 17) առանց կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի թույլտվության՝ լքել աշխատանքային վայրը եւ այն շինությունը, որտեղ անցկացվում են զանգվածային միջոցառումներ.
- 18) անհարկի բղավել, աղմկել, խանգարել անդորրը.

19) առանց կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի թույլտվության՝ ճաշարանից դուրս բերել սննդամթերք.

20) դատապարտյալներին տեսակցության համար խցերից դուրս բերելը՝ հերթափոխի հանձնում-ընդունում կատարելու ժամանակ, օրակարգով սննդի ընդունման համար, ինչպես նաև քնի համար նախատեսված ժամերին.

21) դատապարտյալի տեղաշարժը բնակելի գոտու սահմաններից դուրս՝ ավարտակոչից մինչև վերկաց.

22) խցերից դուրս տեղաշարժն ավարտակոչից մինչև վերկաց՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

2. Սույն հոդվածի առաջին մասի 8-14-րդ կետերով սահմանված արգելքները չեն տարածվում բաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալների վրա»:

Հոդված 3. Օրենսգրքի 80-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 11-րդ մասով՝

«11. Կարճաժամկետ մեկնում կարող է տրամադրվել նաև այն դատապարտյալներին, ովքեր ուղղիչ հիմնարկից դուրս ունեն հաշմանդամ երեխաներ: Կարճաժամկետ մեկնումը տրամադրվում է միայն այն դատապարտյալներին, ովքեր պաշտպանում են կապն ընտանիքի եւ մասնավորապես հաշմանդամ երեխայի հետ: Ուղղիչ հիմնարկի վարչակազմը կարճաժամկետ մեկնում տրամադրելիս կարող է հաշվի առնել երեխայի կարծիքը»:

Հոդված 4. Օրենսգրքի 82-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ մասով՝

«4. Ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալ հղի, կերակրող մայր եւ մանկահասակ երեխաներ ունեցող դատապարտյալ անձանց, ովքեր պատիժը կրելու սահմանված կարգի խախտումներ թույլ չեն տվել եւ ունեն ընտանիք, մինչև երեխայի երեք տարին լրանալը հիմնարկի պետի որոշմամբ կարող է թույլատրվել բնակվել իրենց ընտանիքների հետ ուղղիչ հիմնարկի տարածքի սահմաններում գտնվող բնակելի տարածքում:

Նման արտոնություն ստացած դատապարտյալները պարտավոր են առնվազն ամիսը չորս անգամ ներկայանալ վարչակազմի հաշվառմանը: Հաշվառման պարբերականությունը սահմանվում է հիմնարկի պետի որոշմամբ: Բնակելի տարածքները, որտեղ բնակվում են դատապարտյալները, ցանկացած ժամանակ կարող է այցելել հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչը:

Սույն նորմը չի տարածվում այն դատապարտյալների վրա, ովքեր կատարել են առանձնապես ծանր հանցագործություն կամ ում նկատմամբ պատիժ է նշանակվել հանցագործությունների ռեցիդիվի, վտանգավոր կամ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում»:

Հոդված 5. Օրենսգրքի 83-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ մասով՝

«5. Ուղղիչ հիմնարկի վարչակազմը դատապարտյալ կանանց հղիության, ծննդաբերության եւ հետծննդյան ժամանակաշրջանում տրամադրում է անհրաժեշտ մասնագիտացված բժշկական օգնություն»:

Հոդված 6. Օրենսգրքի 89-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ մասով՝

«3. Ուղղիչ հիմնարկի վարչակազմը կազմակերպում է այն դատապարտյալների միջնակարգ կրթությունը, ում 30 տարեկանը դեռ չի լրացել: Այդ դատապարտյալների մասնակցությունը միջնակարգ կրթության գործընթացին պարտադիր է: Դատապարտյալի միջնակարգ կրթությունը կազմակերպվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով սահմանված կարգով: 30 տարին լրացած դատապարտյալների համար միջնակարգ կրթությունը կազմակերպվում է ըստ դատապարտյալի ցանկության»:

Հողված 7. Օրենսգրքի 91-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 7-րդ մասով՝

«7. Ուղղիչ հիմնարկի վարչակազմը ստեղծում է անհրաժեշտ պայմաններ բժշկի ղեկավարությամբ կազմակերպելու ֆիզիկական դաստիարակությունն ու բուժական ֆիզկուլտուրան՝ դրա կարիքն ունեցող դատապարտյալների համար»:

Հողված 9. Օրենսգրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 92՝ -րդ հոդվածով՝

«Հողված 92՝ . *Դատապարտյալի կապն ազատության մեջ գտնվող երեխաների հետ*

1. Ուղղիչ հիմնարկի վարչակազմը ստեղծում է համապատասխան պայմաններ դատապարտյալի՝ իր երեխաների հետ կապն ապահովելու համար:

2. Դատապարտյալը, ում երեխան գտնվում է ազատության մեջ եւ պահվում է պետական հատուկ հաստատությունում, երկու ամիսն առնվազն մեկ կարճատեւ եւ վեց ամիսն առնվազն մեկ երկարատեւ տեսակցության իրավունք ունի իր երեխաների հետ: Այս տեսակցությունների առավելագույն քանակը որոշվում է ուղղիչ հիմնարկի վարչակազմի կողմից՝ հաշվի առնելով դատապարտյալի անձի բնութագիրը, նրա վարքագիծը, կապը երեխայի հետ եւ ազդեցությունը նրա վրա: Տեսակցության տրամադրումը մերժելու դեպքում հիմնարկի վարչակազմը կայացնում է գրավոր պատճառաբանված որոշում:

3. Դատապարտյալների ու նրանց՝ ազատության մեջ եւ պետական հատուկ հաստատություններում պահվող երեխաների միջեւ տեսակցություններն իրականացվում են ուղղիչ հիմնարկի եւ այն պետական հատուկ հաստատության հետ համատեղ, որտեղ պահվում է երեխան: Տեսակցության համար ճանապարհաձախսը տրամադրվում է պետության հաշվին, եթե դատապարտյալի անձնական հաշվի վրա պահանջվող գումարը բացակայում է:

4. Ազատության մեջ եւ պետական հատուկ հաստատություններում պահվող երեխաների հետ տեսակցությունից առաջ անհրաժեշտության դեպքում իրականացվում է նախապատրաստական աշխատանք՝ սոցիալական աշխատողի, հոգեբանի կամ մանկավարժի կողմից»:

Հողված 10. Օրենսգրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ հավելվածով՝

«Ց Ա Ն Կ

ԻՐԵՐԻ ԵՎ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ, ՈՐՈՆՔ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ՈՒՆԵՆԱԼ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ, ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՏԱԿՈՒՄ ՊԱՀՎՈՂ, ԿԱԼԱՆՔԻ ԵՎ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԵՆՑ ՄՈՏ, ՍՏԱՆԱԼ ԿԱՄ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՀԱՆՁՆՈՒՔՆԵՐՈՎ, ԾԱՆՐՈՑՆԵՐՈՎ ԵՎ ՓԱԹԵԹՆԵՐՈՎ

1. Քաղաքացիական շրջանառությունից հանված առարկաներ, նյութեր եւ արտադրատեսակներ.
2. Ցանկացած տեսակի հրազեն եւ սառը զենք.
3. Ցանկացած տեսակի հեռահաղորդակցության կապի միջոց (բջջային հեռախոս, ռացիա եւ այլն), բջջային հեռախոսները՝ բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների.
4. Դրամ, արժեթղթեր, թանկարժեք իրեր, բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների.
5. Ապակյա կամ մետաղյա տարաներ, ինչպես նաեւ այդ տարաներով հեղուկներ կամ սննդամթերք, բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների.
6. Օպտիկական սարքեր (բացառությամբ ակնոցների), բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների.

7. Ցանկացած տեսակի փաստաթուղթ (բացառությամբ քրեական գործին վերաբերող կամ իրենց իրավունքներին ու օրինական շահերին առնչվող փաստաթղթերի եւ գրառումների, եթե դրանք չեն պարունակում պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք), բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների.

8. Կացին, մուրճ եւ այլ գործիքներ, բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների.

9. Դանակ, ածելու շեղք կամ կտրող-ծակող այլ առարկաներ, որոնք իրենց կառուցվածքով նման են սառը զենքի, բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների.

10. Ֆոտոխցիկ, տեսախցիկ, վիդեո- եւ աուդիո ձայնագրող սարքեր, նկարահանող այլ տեխնիկա.

11. Տոպոգրաֆիկ քարտեզներ, կողմնացույցներ.

12. Երաժշտական գործիքներ, բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների.

13. Խմորիչ, տնային պայմաններում պատրաստված պահածոներ, բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների.

14. Էլեկտրակենցաղային իրեր (բացառությամբ էլեկտրական ածելիների), բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների.

15. Անկողնային ծրարներ, բացառությամբ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալների.

16. Ցանկացած տեսակի այլ իր կամ սննդամթերք, բացառությամբ հետեւյալ իրերի կամ սննդամթերքի՝

ա) ծխախոտ, լուցկի, կրակայրիչ,

բ) դատապարտյալների համար սահմանված տեսակի հագուստ, գլխարկ, կոշիկ եւ անկողնային պարագաներ, քաղաքացիական հագուստ՝ կալանավորված անձանց եւ բաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալների համար,

գ) ներքնազգեստ, թաշկինակ, գոտի, գուլպաներ, վզնոց, զուգագուլպաներ, ձեռնոցներ, թաթմաններ, սենյակային հողաթափեր, սպորտային կոշիկ, սպորտային համազգեստ, թելեր, սրբիչ,

դ) հիգիենայի պարագաներ (տնտեսական եւ ձեռքի օճառ, ատամի խոզանակ, ատամի փոշի կամ մածուկ, քսուքներ, շամպուն, սանր, եղունգներ կտրելու աքցան)

ե) գլխաշոր, ռետուզ, կրծկալ, մառլյա, բամբակ, հիգիենիկ փաթեթ, ծամկալներ, վազելին եւ կոսմետիկ պարագաներ (կանանց համար),

զ) հայելի, էլեկտրական կամ միանգամյա օգտագործման անվտանգ ածելի,

է) կոշիկի եւ հագուստի խոզանակներ, կոշիկի քսուք,

ը) պլաստմասսայից պատրաստված տուփեր՝ ակնոցների, օճառի եւ ատամի խոզանակների համար,

թ) սպասք՝ այլումինե, պլաստմասսայե կամ էմալապատ,

ժ) սեղանի խաղեր (բացառությամբ խաղաթղթերի),

ժա) գրականություն, թերթեր, ամսագրեր (բացառությամբ պոռնոգրաֆիկ կամ ահաբեկչական, քսենոֆոբիական բնույթի նյութերի), դասագրքեր, տետրեր, փոստային ծրարներ, բացիկներ, դրոշմանիշեր, հասարակ մատիտներ, գրիչներ,

ժբ) լուսանկարներ, լուսանկարների ալբոմ, օրացույց,

ժգ) գործարանային արտադրության կենցաղային էլեկտրական ջեռուցիչներ (կենտրոնացված ջեռուցման համակարգի բացակայության դեպքում), էլեկտրական թեյնիկ, էլեկտրական սրճեփ,

ժդ) ոչ թանկարժեք մետաղներից պատրաստված խաչեր եւ պաշտամունքի այլ առարկաներ,

ժե) հենակներ, ձեռնափայտեր, պրոթեզներ, հաշմանդամների սայլակներ (բժշկի թույլտվությամբ),

ժզ) ոչ թանկարժեք մետաղներից պատրաստված ձեռքի կամ գրպանի ժամացույց,

ժէ) հեռուստացույց, ռադիոընդունիչ, մագնիսոֆոն (առանց ձայնագրման հնարավորության), սառնարան (փոքր չափերի),

ժը) թզբեհ,

ժթ) գործելու շյուղեր, ասեղնագործության պարագաներ,

ի) մանկական խաղալիքներ, սայլակ (իրենց մոտ երեխա ունեցող անձանց համար),

իա) հանքային ջուր, հյութեր՝ գործարանային արտադրության եւ պլաստմասսայե տարաներով,

իբ) բանջարեղեն, մրգեր, շաքարավազ, կոնֆետ, շոկոլադե սալիկներ, կաթնամթերք, երշիկեղեն, աղ, սուրճ, թեյ, կակաո, մաստակ,

իգ) սննդամթերք, որը չի պահանջում ջերմային մշակում»:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման

Սույն կարգավորման ընդունումը պայմանավորված է քրեակատարողական օրենսդրության մեջ հստակեցումներ մտցնելու, ինչպես նաեւ պատշաճ վարքագիծ դրսեւորող դատապարտյալների համար որոշակի արտոնություններ սահմանելու անհրաժեշտությամբ:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2006 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի եւ ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշմամբ սահմանվել են այնպիսի նորմեր, որոնք ենթադրում են ֆիզիկական անձնաց իրավունքների սահմանափակումներ. խոսքը մասնավորապես ուղղիչ հիմնարկում արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում դատապարտյալների որոշակի իրավունքների սահմանափակման, ուղղիչ հիմնարկում արգելվող գործողությունների ցանկի սահմանման մասին է: Համաձայն Սահմանադրության 83.5-րդ

հողվածի 2-րդ կետի, ի թիվս այլնի, բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները: Տվյալ դեպքում ենթաօրենսդրական ակտով սահմանվել են այնպիսի նորմեր, որոնք կարող են կարգավորվել միայն օրենքի մակարդակով:

Դատապարտված անձանց հետագա սոցիալիզացիան հեշտացնելու համար նախագծով սահմանվում է մինչեւ 30 տարեկան դատապարտյալների պարտադիր միջնակարգ կրթությունը; 30 եւ ավելի տարեկան անձանց դեպքում նորմը պարտադիր բնույթ չի կրում:

Պատիժը կրելու սահմանված կարգի խախտումներ թույլ չտված ուղղիչ հիմնարկում պատիժ կրող հղի, կերակրող մայր եւ մանկահասակ երեխաներ ունեցող դատապարտյալ անձանց համար իրենց ընտանիքների հետ ուղղիչ հիմնարկի տարածքի սահմաններում գտնվող բնակելի տարածքում բնակվելու հնարավորություն է նախատեսվում, ինչը կարելի է խթանել գործոն կհանդիսանա դատապարտյալների կողմից պատշաճ վարքագիծ դրսևորելու, հասարակության՝ մասնավորապես իրենց երեխաների համար պիտանի լինելու փաստը գիտակցելու եւ հետեւաբար ուղղվելու համար: Առաջարկվող դրույթը բխում է նաեւ 1989 թվականի «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի եւ 9-րդ հոդվածի դրույթներից:

Առաջարկվում է սահմանել, որ ուղղիչ հիմնարկի վարչակազմը դատապարտյալ կանանց հղիության, ծննդաբերության եւ հետծննդյան ժամանակաշրջանում տրամադրում է անհրաժեշտ մասնագիտացված բժշկական օգնություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս խմբի անձիք հատկապես խոցելի են, ինչպես նաեւ առողջապահության, մայրության եւ մանկության պաշտպանության նկատառումներով:

Միեւնույն ժամանակ, հաշվի առնելով դատապարտյալի անձի բնութագիրը, նրա վարքագիծը, կապը երեխայի հետ եւ ազդեցությունը, նախատեսվում է դատապարտյալի՝ ազատության մեջ, բայց պետական հատուկ հաստատությունում պահվող երեխաների հետ կարճատեւ ու երկարատեւ տեսակցությունների հնարավորություն:

Նույնկերպ, նախագծով առաջարկվում է սահմանել ուղղիչ հիմնարկից դուրս հաշմանդամ երեխա ունեցող դատապարտյալներին կարճաժամկետ մեկնումներ տրամադրելու հնարավորություն:

Ընդհանրացնելով՝ կարելի է նշել, որ նախագծի ընդունմամբ կշտկվի քրեակատարողական օրենսդրության մեջ առկա օրենքի եւ ենթաօրենսդրական ակտերի անհամապատասխանության հարցը, ինչպես նաեւ այն կնպաստի քրեակատարողական հիմնարկներում գտնվող դատապարտյալների կողմից պատշաճ վարքագիծ դրսևորելուն եւ նրանց կողմից թույլ տրվող կարգապահական խախտումների նվազեցմանը: